

գրուածքին մէջ շատ նշգորտն եւ մանրամասն կը յիշատակէ Ս. Տեղեաց պաշտամունքը: Իր այս գործը Սրբավայրերու պաշտմութեան տեսակետով գլուխ գործոց մըն է: Ամեն ազգէ ու եկեղեցիէ անթիւ են ուղեգիր ուխտաւորներ, որ ամեն դարու մէջ հեռաւոր երկիրներէ ուխտի կուգային Երուսաղէմ. կ'այցելէին բոլոր սուրբ Տեղերը, Քրիստոսի Ս. Գերեզմանը, Բերդեհեմի Ս. Ծննդեան Այրը, Գեթսեմանի, Զիքենեաց լեռը, Յորդանան, շատերը կ'երթային մինչեւ Սամարիա եւ Գալիլիա ու բոլոր նուիրական Տեղերը, ուր մեր Տէրը ապրեցաւ: Իւրաքանչիւր Սրբավայրի պաշտօնեաները սիրով եւ յարգանքով կ'ընդունէին մասնաւորապէս այս ուղեգիրները, որ իրենց ուխտին հետ կը կատարէին պաշտօն մը՝ գրի առնելու Ս. Տեղեաց աւանդութիւնները զոր կը փոխէին տեղական եկեղեցիներէ:

Նոյն աւանդութիւններու մէկ մասը կը կազմէ այս ձառնը. տարակոյս չկայ թէ ուրիշներ ալ կային, որ կորսուած են կամ կը կորսին խոր հետազօտութեանց: Այս աւանդութիւնները Ս. Տեղեաց պաշտմութեան առաջին եւ կարեւոր խարխալն են. խնամով հաւաքած ենք զանոնք եւ դասաւորած այն Սրբավայրին գլուխին տակ՝ որուն յատուկ են, պահելով իւրաքանչիւր Սրբավայրի տեղագրական կարգը եւ ուշագրութիւն ընելով աւանդութեան ժամանակագրական շարքին:

Բացի նիւթոց ցանկէն, գործին կցած ենք նաեւ ցանկ մը՝ ազգային եւ օտար հեղինակներու մատենագիտութեան, որոնցմէ քաղած ենք Ս. Տեղեաց աւանդութիւնները. ազգային աղբիւրներէ քաղուածները չենք բաժնած օտարներէն, այլ միայն նկատի առած ենք Սրբավայրը՝ որուն կը վերաբերի մասնաւորապէս աւանդութիւնը: Օտար աղբիւրներն են ընդհանրապէս Ս. Տեղեաց մասին եղած